

նայի արձակեալ զոգիս ձեր՝ պահեսցէ անվնաս յաւր տեանն Յիսուսի Զրիստոսի»:

10 Եւ լուեալ զայնպիսի հրաման ի սուրբ քահանայիցն Զրիստոսի ամենայն նախարարացն՝ ետուն պատասխանի եւ ասէն. «Ո՞ւմ արդեալք յաղթիցէ քուն յարքայութեանս<sup>1</sup>, ուր ոչ գոյ տքնութիւն եւ ոչ ծանրութիւն տաղտկութեան. եւ կամ ո՞ր արդեալք ախտացեալ տրտմեսցի յանանց բարութեանն, ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք: 11 Եւ մեզ աւրս այս կարապետ եւ առիթ է աւուրն այնմիկ<sup>2</sup>, ուր վարդապետութիւնք սուրբ քահանայիցն Աստուծոյ քարոզեալ լսելի լիներ ի միջի մերում: 12 Եւ տրտմութիւն<sup>3</sup> ընդէ՞ր իսկ բնաւ ծնանիցի ի սիրտս ուրուք, որք արժանի եղաք ցանկ<sup>4</sup> զձնողս մեր եւ զհոգեւոր վարդապետս ի կենդանութեան մերում ի մարմնի իբրեւ զիրեշտակս տեսանել, եւ ի վախճանի իբրեւ զգուարթունս: 13 Բայց որ արտասուեմքս փղձկալով՝ որպէս Փրկչին ամենեցուն Զրիստոսի զԵրուսաղէմ տեսեալ կամ զՂազար, զոր յարոյցն ի մեռելոց, թէ ընդէ՞ր իսկ անմահ եւ անախտ ստեղծուածս յվարաջէն, գերեալ ի խաբէութենէ թշնամւոյն, դարձեալ ի հող՝ անկաւ ընդ ախտիւ եւ մահուամբ»:

14 Եւ այսպիսի բանս անետալիցս լուեալ ի նախարարացն սուրբ քահանայիցն Աստուծոյ՝ մեծաւ ուրախութեամբ սկսան ամենեքեան տարածել զձեռս ի յերկինս, գոհանալ զԱստուծոյ եւ ասել. «Գոհանամք զքէն, Աստուած, որ ի շնորհէ քարոզութեան սուրբ առաքելոցն բազումս ծնար առաքեալս, եւ ի շնորհէ ճգնազգեցիկ մարտիրոսացն անթիւս ծնար նահատակս. որպէս առաքեալն եւ խոստովանողն տերն Գրիգորիոս, արարողն ուղիղ գործոց եւ ուսուցիչն յստակ եւ անհեղձ վարդապետութեան<sup>5</sup>, նախանձեցուցեալ զամենեսեան ի բարի նախանձս՝ ծնաւ վարդապետս եւ անթիւ նահատակս, յոլով միանձունս, անչափ դասս կուսանաց, զամենայն անձն բնաւ տաճար բնակութեան սուրբ Երրորդութեանդ յաւրինեաց: 15 Գոհանամք զքէն, Փրկիչ, որ ի հոտէն սրբոյն Գրիգորիոսի զոչխարսն առաւել քան զհովիւս բանաւորս արարեր, եւ զաշակերտս ի ժողովրդէնէն առաւել քան զվարդապետս յաւրինեցեր զհտունս: 16 Ահա եւ մէք այժմ զաւրացեալք քաջալերեցաք ի բանից շնորհալից հոգեւոր ծննդոցս մեր, հարք յորդուց, վարդապետք յաշակերտաց, քահանայք ի ժողովրդոց: 17 Եւ արդ՝ յուղարկիմք ի սոցանէ ուրախութեամբ, որոց արկեալ զմեզ յուղի՝ առ քեզ առաքէն, եւ ինքեանք մալով ի մարմնի՝ ընդ քեզ են եւ առ քեզ, եւ քեւ զաւրանան: 18 Պա-

1 2. արքայութեանն

2 Ատ. կարապետ է եւ առիթ յաւուրն յայնմիկ. ԲԳտ. ...աւուրն յայնմիկ. այսպէս ըստ 2.

3 2Ատ. տրտմութիւնք

4 2. ցանկ

5 Կամ ըստ 2. վարդապետութեամբ